Helsinki Association
For Human Rights

ԴԱՏԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

ԴԱՏԱԿԱՆ
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ
ԵՒ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

«Հելսինկյան ասոցիացիա» ՀԿ
Երևան
2020

Ուղեցույցը հայերեն հրատարակություն է, որը պատրաստել է «Հելսինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ իրականացվող «Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում: Ուղեցույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները միմիայն «Հելսինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպությանն են, և պարտադիր չէ, որ արտահայտեն Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կամ «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության տեսակետները:

Ուղեցույցը նախատեսված է դատական մշտադիտարկմամբ և լուսաբանմամբ հետաքրքրված կամ դրանով զբաղվող՝ տարբեր ոլորտներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար: Այնուամենայնիվ, դրանից կարող է օգտվել յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է տեղեկանալ դատական մշտադիտարկման և լուսաբանման վերաբերյալ ու զբաղվել նշյալ գործունեությամբ:

Դատական մշտադիտարկման և լուսաբանման ուղեցույց /«Հելսինկյան ասոցիացիա» ՀԿ Երևան, 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

5 ՆԱԽԱԲԱՆ

6 ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

7 ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14 ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ

16 ԴԱՏԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

18 ԴԱՏԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ԴԱՏԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

20 ԴԱՏԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԸ

21 ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

22 ՀԱՐՑԵՐ, ՈՐՈՆՑ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՏԱՐՎՈՒՄ ԵՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

25 ՕՐԻՆԱԿԵԼԻ ԹԵՐԹԻԿ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

33 ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

38 ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

41 ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

42 ABSTRACT

ՆԱԽԱԲԱՆ

Արդար և դռնբաց դատաքննության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է: Այս իրավունքն ուղղակիորեն կիրառվում է բոլոր դատավարություններում (քրեական, քաղաքացիական, վարչական):

Արդար դատաքննության չափանիշները բարդ են, փոխկապակցված և ուղղված են արդարադատության պատշաճ իրականացման ապահովմանը:

Սույն իրավունքի իրացմանն ուղղված ընթացակարգային նորմերը հաճախ մեծ դեր են խաղում նյութական իրավունքների իրացման հարցում, ինչը պետք է հաշվի առնվի դատաքննության ընթացքում: Արդար դատաքննության չափանիշները փոխկապակցված են արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման հետ: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, արդար դատաքննության իրավունքի ազգային և միջազգային երաշխիքների ապահովման արդյունավետ մեխանիզմ են դատական գործերի մշտադիտարկումը (այսուհետ՝ դատական մշտադիտարկում) և դատավարության լուսաբանումը:

Դատական մշտադիտարկումը և դատավարության լուսաբանումը մեծացնում են արդարադատության իրականացման թափանցիկությունը՝ դրանով իսկ դառնալով դռնբաց դատաքննության իրավունքի պահպանման միջոց: Դիտորդների և լրագրողների ներկայությունը կարող է խթանել դատարաններում արդար դատաքննության երաշխիքների կատարելագործումը և վստահություն ստեղծել դատական համակարգի նկատմամբ:

ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Ուղեցույցն անդրադառնում է արդար դատաքննության իրավունքին և դրա իրացմանն ուղղված մեխանիզմներին՝ դատական մշտադիտարկմանն ու լուսաբանմանը:

Ուղեցույցի նպատակն է բարելավել դիտորդների և լրագրողների հմտությունները դատավարությունների մասնագիտական մշտադիտարկման և լուսաբանման նպատակով:

Դատական մշտադիտարկումը կարող է իրականացվել ինչպես դատաքննության, այնպես էլ նախնական քննության փուլերում, կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունների քննության ժամանակ:

Ուղեցույցը դատավարությունների դիտարկման և լուսաբանման սկզբունքների ու մեթոդների հավաքածու է և լավագույնս կարող է նպաստել ոլորտով հետաքրքրված անձանց մասնագիտական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև անուղղակիորեն ազդել արդար դատաքննության իրացման պոզիտիվ պարտավորության կատարման վրա: Այն մանրամասն անդրադառնում է դատավարական տերմիններին և դրանց կիրառման շրջանակին, առաջարկում արդյունավետ ուղիներ դատավարության ճիշտ դիտարկման և լուսաբանման համար: Ուղեցույցում նաև ներառված են վարքագծի կանոններ, որոնք պահպանելը պարտադիր է դատավարությանը հետևող դիտորդների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ***Քրեական դատավարությունում***

Դեպք

Հանցագործության հատկանիշներ պարունակող իրադարձություն, որի կապակցությամբ իրականացվում է քրեական դատավարություն:

Քրեական գործ

Քրեական հետապնդման մարմնի կամ դատարանի կողմից իրականացվող առանձին վարույթ քրեական օրենսգրքով չթույլատրված մեկ կամ մի քանի ենթադրաբար կատարված արարքների կապակցությամբ:

Նյութեր

Փաստաթղթեր և այլ առարկաներ, որոնք գործի բաղկացուցիչ մասն են կամ ներկայացված են գործին կցվելու համար, հաղորդումներ, ինչպես նաև փաստաթղթեր և այլ առարկաներ, որոնք կարող են նպաստել գործով վարույթի ընթացքում նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելուն:

Քրեական հետապնդում

Այն բոլոր դատավարական գործողությունները, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները և տուժողը՝ նպատակ ունենալով

բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը:

Քրեական հետապնդման հարուցում

Քրեական հետապնդման մարմնի որոշումն անձին որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև մինչև այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին:

Քրեական հետապնդման դադարեցում

Քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի որոշումն առաջադրված մեղադրանքը վերացնելու կամ մեղադրանքից հրաժարվելու մասին:

Մեղադրանքի կողմ

Քրեական հետապնդման մարմինները, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը և նրանց օրինական ներկայացուցիչներն ու ներկայացուցիչները:

Մեղադրող

Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը:

Պաշտպանության կողմ

Կասկածյալը, մեղադրյալը, ամբաստանյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը:

Պաշտպանյալ

Կասկածյալը կամ մեղադրյալը իրենց պաշտպանի համար:

Արդարացված

Այն անձը, որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ, կամ որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է անմեղության հիմքով:

Քաղաքացիական հայցվոր

Քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս:

Քաղաքացիական պատասխանող

Ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի վրա օրենքով, քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացված հայցի հիման վրա կարող է դրվել գույքային պատասխանատվություն քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով գույքային վնաս պատճառած մեղադրյալի գործողությունների համար:

Դատավարության մասնակիցներ

Դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը:

Արգելանքի վերցնել

Գործողություն, որը սկսվում է անձին ազատությունից փաստացի հարկադրական զրկելու պահից՝ ձերբակալելիս, կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս, ազատազրկման ձևով դատավճիռն ի կատար ածելիս:

Ինքնաբացարկ

Դատավորի, դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի աշխատակցի, պաշտպանի, տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցչի, ընթերակայի, դատական նիստի քարտուղարի, թարգմանչի, մասնագետի, փորձագետի կողմից արված հայտարարություն:

Բացարկ

Դատավարության մասնակցի կողմից դատախազին, քննիչին, հետաքննության մարմնի աշխատակցին և դատավորին ներկայացված միջնորդություն:

Օգտագործվող հասկացությունների ցանկին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

- ***Քաղաքացիական դատավարությունում***

Հայցի հարուցում

Հայցադիմում ներկայացնել:

Հայցի ապահովման միջոց

Առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կիրառում է հայցի ապահովման միջոցներ, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին:

Քաղաքացիական դատավարության մասնակիցներ

Գործին մասնակցող անձինք, նրանց ներկայացուցիչները, կողմերը, վկան, փորձագետը, մասնագետը, թարգմանիչը, իրավասու անձինք և մարմիններն օրենքով նախատեսված դեպքերում:

Գործին մասնակցող անձինք

Կողմերը (հայցվորը և պատասխանողը), երրորդ անձինք, դիմողները և դիմումի քննության ելքով շահագրգռված այլ անձինք:

Համահայցվոր

Մեկ կամ մի քանի հայցվորի հետ համատեղ հայց ներկայացրած անձ:

Համապատասխանող

Անձ, որի դեմ մեկ կամ մի քանի պատասխանողի ներգրավմամբ ներկայացված է հայց:

Ինքնաբացարկ

Ներկայացվում է դատավորի կողմից սեփական նախաձեռնությամբ:

Դատական ծախսեր

Պետական տուրքը, փորձաքննության և թարգմանության հետ կապված ծախսերը, վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարվելիք գումարները, գործին մասնակցող անձանց՝ գործի քննության վայր ժամանելու, ինչպես նաև նրանց՝ դատարան ներկայանալու կապակցությամբ ժամանակավոր կացարանով ապահովելու հետ կապված ծախսերը, գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները, ապացույցները, դրանց գտնվելու վայրում զննելու հետ կապված ծախսերը, դատարանի պահանջները և դատական հանձնարարությունները կատարելու հետ կապված գործին մասնակցող անձանց ծախսերը և այլն:

Օգտագործվող հասկացությունների ցանկին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

- ***Վարչական դատավարությունում***

Գործի հարուցում

Հայցադիմում ներկայացնել:

Վիճարկման հայց

Հայցվորը պահանջում է ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը:

Պարտավորեցման հայց

Հայցվորը պահանջում է ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը:

Գործողության կատարման հայց

Հայցվորը պահանջում է կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը:

Ճանաչման հայց

Հայցվորը պահանջում է ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը:

Վարչական դատավարության մասնակիցներ

Կողմերը՝ հայցվորը և պատասխանողը, և երրորդ անձինք:

Ինքնաբացարկ

Ներկայացվում է դատավորի կողմից սեփական նախաձեռնությամբ:

Դատական ծախսեր

Պետական տուրք և գործի քննության հետ կապված այլ ծախսեր (վկաներին, փորձագետներին, թարգմանիչներին վճարվելիք գումարները, դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները, զննում, ներառյալ տեղազննություն կատարելու ծախսերը, դատարանի պահանջները և դատական հանձնարարությունները կատարելու հետ կապված ծախսերը և այլն):

Օգտագործվող հասկացությունների ցանկին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ

Դատական մշտադիտարկումը համակողմանի գործիք է, որը կարող են օգտագործել դատական համակարգի արդարության, արդյունավետության և թափանցիկության ամրապնդման նպատակ ունեցող հանրային մարմինները, քաղաքացիական հասարակությունը և միջազգային կազմակերպությունները: Դատական մշտադիտարկումը կարող է համարվել նաև ախտորոշիչ գործիք, որը թույլ է տալիս անհատական վարույթների ընթացքում օբյեկտիվ տեղեկություններ հավաքել արդարադատության իրականացման վերաբերյալ և դրանց հիման վրա կազմել ամփոփագրեր ու տալ եզրակացություններ արդարադատության համակարգի գործունեության մասին:

Դատական մշտադիտարկումը կարելի է դիտարկել ինչպես նեղ, այնպես էլ ավելի լայն իմաստով:

Նեղ իմաստով դատական մշտադիտարկումը սահմանափակվում է դատարանում անցկացվող բաց դատական գործընթացով, մասնավորապես դատավորների, դատախազների, փաստաբանների, վկայի, փորձագետի, մասնագետի, ընթերակայի, թարգմանչի գործողությունները դիտարկելով:

Որոշ իրավիճակներում մշտադիտարկման այս ձևը կարող է լինել դատավարական գործընթացի արդարության աստիճանը գնահատելու միակ մատչելի միջոցը, և, չնայած սահմանափակ հնարավորություններին, այս ձևով կարող են հայտնաբերվել բազմաթիվ լուրջ խնդիրներ:

Այնուամենայնիվ, դատավարության ընթացքի անմիջական դիտարկումը թույլ է տալիս միայն մասնակի պատկերացում կազմել արդարադատության համակարգի աշխատանքի վերաբերյալ: Դատական նիստերի ընթացքում հայտնաբերված յուրաքանչյուր առանցքային խնդրի պատճառները հասկանալու համար անհրաժեշտ է կրկնակի ստուգել ուղիղ դիտարկման միջոցով հավաքված տեղեկությունները և առաջարկել ռացիոնալ լուծումներ: Կարող են անհրաժեշտ լինել նաև տեղեկությունների լրացուցիչ աղբյուրներ: Նման տեղեկություններ հավաքելու համար անհրաժեշտ է դատական մշտադիտարկումն իրականացնել ավելի լայն իմաստով. այդպիսին է, օրինակ, արդարադատության համակարգի կամ իրավական համակարգի մշտադիտարկումը: Այն պետք է ներառի ոչ միայն դատավարության դիտարկումը, այլև դատական գործընթացների այլ ուղղություններ և իրավական ոլորտի այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են ազատազրկման վայրերը (ՔԿՀ-ներ, ՁՊՎ-ներ), իրավապահ մարմինները, դատական ծառայության կառավարման մարմինները, ուսումնական հաստատությունները, դատավորների և դատախազների նշանակման գործընթացները կամ նրանց դեմ հարուցված կարգապահական վարույթները և այլն:

Դատական մշտադիտարկումը կարող է լուծել խնդիրների լայն շրջանակ: Այն՝ որպես արդարադատության ոլորտի բարեփոխումներին միտված արդյունավետ գործիք, կարող է արդյունավետ լինել հատկապես բարեփոխումներ իրականացնելու քաղաքական կամքի առկայության պարագայում:

Դատական մշտադիտարկման մեկ այլ սահմանափակում ի հայտ է գալիս այն դեպքում, երբ հայտնաբերվում են դատական գործընթացներում առկա խնդիրները, բայց հնարավոր չէ ճշտել այս տեղեկության հավաստիությունը կամ պարզել այդ խնդիրների հիմնական պատճառներն առանց տեղեկությունների հավաքման լրացուցիչ մեթոդների կիրառման:

ԴԱՏԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Դատական մշտադիտարկման ծրագրերը հիմնված են մի շարք մեթոդաբանական սկզբունքների վրա:

- ***Արդարադատության իրականացմանը չմիջամտելու սկզբունք***

Այս սկզբունքը հիմնված է դատական համակարգի անկախությունը հարգելու անհրաժեշտության վրա: Անկախություն ասելով՝ պետք է հասկանալ, որ դատական համակարգը՝ որպես ինստիտուտ, և առանձին գործերով արդարադատություն իրականացնող դատավորները պետք է կարողանան կատարել իրենց մասնագիտական պարտականությունները ինչպես առանց գործադիր և օրենսդիր, այնպես էլ որևէ այլ արտաքին մարմնի ազդեցության:

Այսպիսով, ըստ չմիջամտելու սկզբունքի՝ դատական մշտադիտարկման ընթացքում պետք է հարգվի դատարանի անկախությունը՝ այդ կերպ նպաստելով դրա ամրապնդմանը:

Չմիջամտելու սկզբունքն ամեն անգամ ենթակա է գնահատման կոնկրետ խնդրի լույսի ներքո: Դիտորդի ներկայությունը դատական նիստին կարող է համարվել «միջամտության» մի տեսակ: Միևնույն ժամանակ նման ներկայությունը կարող է դրական հետևանքներ ունենալ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ այն կարող է օգնել դատական պրակտիկան բարելավելուն և կամայականությունները սահմանափակելուն:

Իր բնույթով դատական մշտադիտարկումն անխուսափելիորեն «միջամտություն» է՝ հաշվի առնելով այն, որ ազդեցություն է թողնում արդարադատության համակարգի, այդ թվում նաև դատավորների վարքագծի վրա: Չմիջամտելու սկզբունքի որոշ մեկնաբանություններում թույլատրելի վարքագիծ են համարվում դատախազների և փաստաբանների հետ դիտորդների շփումները՝ որպես տեղեկություններ հավաքելու մեթոդներից մեկը: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում դատական մշտադիտարկում իրականացնող անձինք այս սկզբունքն ավելի խիստ և ոչ ճկուն են մեկնաբանում և արգելում նմանատիպ շփումները:

Ամեն դեպքում դիտորդները պետք է խուսափեն ցանկացած գործողությունից, որը կարող է մեկնաբանվել որպես ոչ պատշաճ միջամտություն:

- ***Օբյեկտիվության սկզբունք***

Ըստ օբյեկտիվության սկզբունքի՝ դատական մշտադիտարկման ծրագրերը պետք է ներկայացնեն ճշգրիտ դատական զեկույցներ՝ անաչառորեն հետևելով հստակ սահմանված և ընդունված չափանիշներին: Այս սկզբունքը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատական մշտադիտարկումն օգտագործվում է որպես ախտորոշիչ գործիք և նպատակ ունի հավաստի տեղեկություններ տրամադրելու արդարադատության համակարգի գործունեության մասին: Բացի այդ, դիտորդների կողմնակալության վերաբերյալ կասկածների հավանականությունը նվազագույնի հասցնելը նպաստում է մշտադիտարկման եզրակացությունների և առաջարկությունների նկատմամբ շահագրգիռ անձանց շրջանում վստահության մթնոլորտի ապահովմանը: Հետևաբար անհրաժեշտ է, որ փաստերն ու զեկույցները հիմնված լինեն ներպետական օրենսդրության և միջազգային չափանիշների վրա՝ եզրակացությունները հիմնավորելով օբյեկտիվ տվյալներով:

- ***Համաձայնության սկզբունք***

Գործառնական մակարդակում դատական մշտադիտարկման նպատակի վերաբերյալ դատական իշխանության հետ փոխըմբռնումը երաշխավորում է դիտորդների մուտքը դատարաններ և մեծացնում մշտադիտարկման արդյունավետությունը: Այս փոխըմբռնմանը կարելի է հասնել համաձայնագրեր կնքելով, աշխատանքային հարաբերություններ հաստատելով, տեղեկություններ փոխանակելով, կառուցողական առաջարկություններ անելով և դրանց իրականացման գործընթացում պաշտոնատար անձանց աջակցելով:

ԴԱՏԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: ԴԱՏԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Դատական մշտադիտարկումն առանձնահատուկ է մեթոդական տեսանկյունից, և, ըստ այդմ, առանձնացվում է դատական մշտադիտարկման երեք տեսակ՝ դատավարության համակարգային մշտադիտարկում, դատավարության թեմատիկ մշտադիտարկում և դատավարության հատուկ մշտադիտարկում: Մշտադիտարկման թվարկված տեսակներից յուրաքանչյուրը տարբերվում է մյուսներից իր նպատակով և ծավալով:

- ***Դատավարության համակարգային մշտադիտարկում***

Դատավարությունների համակարգային մշտադիտարկումը կարող է կիրառվել բոլոր տեսակի վարույթների համար, չնայած սովորաբար առաջնային նշանակություն են տալիս վարույթների որոշ տեսակների և ընտրում հենց դրանք: Ժամանակի ընթացքում մշտադիտարկման հիմնական ուղղությունը կարող է փոխվել կա՛մ նոր իրադարձություններին հակազդելու, կա՛մ մշտադիտարկման նպատակների փոփոխության արդյունքում: Օրինակ՝ համակարգային մշտադիտարկումն սկզբում կարող է կենտրոնանալ քրեական դատավարության վրա, այնուհետև ուշադրություն դարձնել քաղաքացիական գործերին: Համակարգային մշտադիտարկման երկարաժամկետ և համակողմանի մոտեցումը թույլ է տալիս վեր հանել արդարադատության համակարգի ուժեղ և թույլ կողմերը, արժանանալ շահագրգիռ կողմերի վստահությանը և ընդգրկել շահերի պաշտպանության լայն շրջանակ:

- ***Դատավարության թեմատիկ մշտադիտարկում***

Թեմատիկ մշտադիտարկման պատճառ կարող են լինել արդարադատության համակարգում առկա առանձին լուրջ խնդիրները կամ հատուկ մարտահրավերները: Նման մշտադիտարկումը կարող է իրականացվել թե՛ որպես համակարգային մշտադիտարկման մաս, թե՛ առանձին: *Դատավարության թեմատիկ մշտադիտարկում* տերմինն օգտագործվում է հիմնականում այն ծրագրերի համար, որոնցով տևական ժամանակ ուսումնասիրվել է որոշակի թեմա, նշանակվել են աշխատակիցներ՝ վերջիններիս աշխատանքի համար մշակված հատուկ մեթոդաբանությամբ՝ ի տարբերություն համակարգային մշտադիտարկման, որն ուղղված է ավելի ընդգրկուն հարցերի ուսումնասիրությանը: Թեմատիկ մշտադիտարկումը թույլ է տալիս ավելի խորն ուսումնասիրել որոշ հիմնախնդիրներ և դիտորդներից պահանջում է մասնագիտացում օրենսդրության համապատասխան ոլորտներում:

- ***Դատավարության հատուկ մշտադիտարկում***

Դատավարության հատուկ մշտադիտարկումն իրականացվում է որպես անմիջական հակազդում որոշակի իրադարձությունների արդյունքում հարուցված դատական վարույթներին և հատուկ նախատեսվում է դրանց դիտարկման համար: Նման իրադարձություններ են հետընտրական համատարած բռնությունները, քաղաքական անկայունությունը կամ իրավապաշտպանների նկատմամբ հետապնդումը:

Հատուկ մշտադիտարկման ծրագրի ղեկավարները պետք է հաշվի առնեն դատավարությունների հանգամանքները: Օրինակ, եթե այդ դեպքերը կապված են հետընտրական իրադարձությունների հետ, ապա պետք է իրականացվի հավաքների ազատության իրավունքի կիրարկման վերլուծություն:

Ցանկալի է, որ հատուկ մշտադիտարկումը չդադարեցվի, քանի դեռ դատարանի վճիռը (դատավճիռը) օրինական ուժի մեջ չի մտել: Սա թույլ է տալիս ամբողջական պատկերացում կազմել այն մասին, թե ինչպես է դատական համակարգը քննում դեպքերը: Վերաքննիչ բողոքների վարույթի դիտարկումը կարող է հետագայում վեր հանել նաև բողոքարկման ընթացակարգի թերությունները:

ԴԱՏԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԸ

Դատական մշտադիտարկումն ընդհանուր առմամբ բաղկացած է հետևյալ քայլերից՝ 1) տեղեկությունների հավաքում, 2) վերլուծություն, 3) առաջարկություն, 4) առաջարկությունների կատարման հետագա վերլուծություն: Առաջարկությունների կատարման հետագա վերլուծության փուլը սովորաբար ներառում է նաև տեղեկությունները հավաքելու շարունակականությունը, ինչը կարող է պահանջել լրացուցիչ վերլուծություն, առաջարկությունների կատարման միջոցներ, ուստի այս գործընթացն ըստ էության նման է պարբերաբար կատարվող գործողությունների, հետևաբար կոչվում է *դատական մշտադիտարկման պարբերաշրջան:*

Առաջին փուլը՝ տեղեկությունների հավաքումը, ներառում է դատական գործերի մշտադիտարկումը և տեղեկություններ հավաքելու այլ մեթոդներ: Այնուհետև բացահայտված փաստերը ուսումնասիրվում և վերլուծվում են ազգային և միջազգային իրավունքի լույսի ներքո: Դրան սովորաբար հաջորդում է զեկույց կազմելը և շահերի պաշտպանության միջոցառումների վերաբերյալ որոշում կայացնելը: Այս ամենից հետո կարևոր է առաջարկությունների կատարման նպատակային մշտադիտարկման իրականացումը:

Ծրագրի կառուցվածքը, որպես կանոն, բաղկացած է երեք մակարդակից՝ դիտարկման մակարդակ, վերլուծության մակարդակ (սա կարելի է համարել նաև կառավարման միջին մակարդակ) և կառավարման բարձրագույն մակարդակ (սրա պատասխանատվության տիրույթում են դիտորդական գործընթացի կառավարումը և դատավարության մասնակիցների շահերի պաշտպանությունը):

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քանի որ զեկույցը ջատագովության հիմնական գործիքն է, այն պետք է կազմվի և ներկայացվի այնպես, որ հնարավորինս մեծ ազդեցություն ունենա: Դրա համառոտ ակնարկը պետք է լինի տեղեկատվական ու պարզ և շեշտադրի զեկույցի հիմնական գաղափարները, իսկ ձևակերպումները պետք է ճշգրտորեն ստուգվեն՝ իշխանությունների և լրատվամիջոցների սխալ մեկնաբանություններից խուսափելու համար:

Զեկույցին զուգահեռ կարելի է հրապարակել մամլո հաղորդագրություն, որը կանդրադառնա մշտադիտարկման հիմնական բացահայտումներին և առաջարկություններին, ինչպես նաև առաջիկայում հնարավոր համագործակցությանը:

Եթե զեկույցը հրապարակված է մի քանի լեզուներով, ապա պետք է ապահովվի իրավաբանական տերմինաբանության որակյալ թարգմանություն: Որպես օգտակար նախազգուշացում՝ զեկույցում կարելի է նշել, որ չնայած այն թարգմանվել է օտարալեզու ընթերցողների հարմարության համար, այնուամենայնիվ պաշտոնական տարբերակը հայերենն է:

ՀԱՐՑԵՐ, ՈՐՈՆՑ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՏԱՐՎՈՒՄ ԵՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

1. Դատաքննության իրավունքը դռնբաց դատական նիստի ընթացքում:

2. Արդար և հրապարակային դատաքննության իրավունքն իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանում:

3. Դատավարությանը ներկա գտնվելու և պաշտպանվելու իրավունքը, այդ թվում՝ ապացույցներն ուսումնասիրելու և պաշտպանությանը պատրաստվելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ տրամադրելը:

4. Դատական գործի ընթացքում իրավաբանական օգնության իրավունքը, ներառյալ այդ իրավունքի մասին իրազեկումը, որոշ հանգամանքներում անվճար իրավաբանական օգնության իրավունքը և փաստաբանի արդյունավետ աջակցությունը:

5. Կողմերի դատավարական հավասարությունը, այդ թվում՝ վկաներ հրավիրելու, վկաներին հարցաքննելու իրավունքը, ինչպես նաև պաշտպանությանը նախապատրաստվելու համար բավարար ժամանակ ունենալը:

6. Անմեղության կանխավարկածի և ապացուցման բեռի սկզբունքների կիրառումը:

7. Դատարանում ցուցմունքներ տալուց հրաժարվելու իրավունքը:

8. Թարգմանիչ ունենալու իրավունքը:

9. Փաստաբանին լիազորելու, ինչպես նաև պաշտպանության և աջակցության գործողությունները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ցանկալի է, որ դիտորդներն ակտիվ գրառեն դատաքննության ընթացքում իրենց դիտարկումները:

Չնայած մի քանի ժամ տևող դատական նիստի ընթացքում մանրամասն գրառում կատարելը շատ հոգնեցուցիչ է, այնուամենայնիվ փորձը ցույց է տալիս, որ այդ ջանքերն արդարացված են: Ավելի լավ է գրառել տեղեկությունները, որոնք ի վերջո կարող են և պիտանի չլինել, քան բաց թողնել որևէ փաստ, որով հնարավոր է հիմնավորել դիտարկման ինչ-որ եզրակացություն:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԹԵՐԹԻԿ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- *Քրեական գործի շրջանակներում*

Տեղեկատվություն գործի մասին

- Դատարանի անվանումը
- Դատավորի անուն-ազգանունը
- Գործի անվանումը /մեղադրանքը/
- Գործի համարը
- Տուժողը/ները/
- Տուժողի/ների/ ներկայացուցիչը/ները/
- Տուժողի/ների /օրինական ներկայացուցիչը/ները/
- Մեղադրողը /դատախազը/

- Ամբաստանյալի/ների/ անուն-ազգանունը
- Ամբաստանյալի/ների/ տարիքը, սեռը, ազգային պատկանելությունը, քաղաքացիությունը
- Ամբաստանյալի/ների/ պաշտպանը/ները/
- Ամբաստանյալի/ների/ օրինական ներկայացուցիչը/ները/

Տեղեկատվություն դատաքննության մասին

- Դատարանի անկախությունը, անաչառությունը, անմեղության կանխավարկածի պահպանումը
- Ամբաստանյալին, տուժողին և դատավարության մյուս մասնակիցներին իրենց իրավունքների մասին ծանուցելը
- Հրապարակային դատավարության իրավունքի պահպանումը
- Թարգմանչի օգնության իրավունքը
- Պաշտպանության նախապատրաստման համար պաշտպանության կողմին պատշաճ ժամանակ տրամադրելը
- Կողմերի՝ հարցաքննելու իրավունքը
- Կողմերի՝ հավասարության իրավունքը
- Դատավճիռը
- Այլ հարցեր (ծավալուն նշումներ կատարել հաջորդ դատական նիստի ժամանակի և ուշադրության արժանի այլ հարցերի մասին)

Միջնորդությունները դատաքննության ընթացքում

- Միջնորդություն ներկայացնող կողմը /անուն-ազգանունը/
- Միջնորդության բովանդակությունը
- Հակառակ/մեղադրող կամ պաշտպանական/ կողմի դիրքորոշումը միջնորդության վերաբերյալ
- Դատախազի դիրքորոշումը միջնորդության վերաբերյալ
- Միջնորդության վերաբերյալ դատարանի որոշումը
- Միջնորդության վերաբերյալ դատարանի որոշման հիմքերը

Տուժողի հարցաքննությունը

- Տուժողի անուն-ազգանունը
- Տուժողի ցուցմունքների համապատասխանությունը նախաքննության ընթացքում տված ցուցմունքներին
- Տուժողին առաջինը հարցաքննած կողմը
- Տուժողի նկատմամբ գործադրված ազդեցությունը (օրինակ՝ հոգեբանական ճնշում)
- Դատարանի դիրքորոշումը տուժողի նկատմամբ դատավարության մասնակցի գործադրած ազդեցության վերաբերյալ

Ամբաստանյալի հարցաքննությունը

- Ամբաստանյալի անուն-ազգանունը
- Ամբաստանյալի տված ցուցմունքի համապատասխանությունը նախաքննության ընթացքում տված ցուցմունքին
- Ամբաստանյալին առաջինը հարցաքննած կողմը
- Ամբաստանյալի նկատմամբ գործադրված ազդեցությունը (օրինակ՝ հոգեբանական ճնշում)
- Դատարանի դիրքորոշումը ամբաստանյալի նկատմամբ դատավարության մասնակցի գործադրած ազդեցության վերաբերյալ
- Ամբաստանյալի նկատմամբ դատարանի գործադրած ազդեցությունը (օրինակ՝ հոգեբանական ճնշում)
- Ամբաստանյալի պաշտպանի ներկայությունը դատավարությանը

Վկայի հարցաքննությունը

- Վկայի անուն-ազգանունը
- Վկայի ցուցմունքների համապատասխանությունը նախաքննության ընթացքում տված ցուցմունքներին
- Վկային առաջինը հարցաքննած կողմը

- Վկայի նկատմամբ գործադրված ազդեցությունը (օրինակ՝ հոգեբանական ճնշում)
- Դատարանի դիրքորոշումը վկայի նկատմամբ դատավարության մասնակցի գործադրած ազդեցության վերաբերյալ
- Վկայի հարցաքննության ժամանակ այլ վկաների՝ դատական նիստերի դահլիճում գտնվելը
- Վկայի օրինական ներկայացուցչի մասնակցությունը դատավարությանը

Փորձագետի/մասնագետի հարցաքննությունը

- Փորձագետի/մասնագետի անուն-ազգանունը
- Փորձագետի/մասնագետի մասնագիտական ոլորտը
- Փորձաքննության/մասնագիտական աջակցության միջնորդություն ներկայացրած անձի տվյալները
- Փորձաքննության/մասնագիտական աջակցության տեսակը
- Փորձագետին/մասնագետին առաջադրված հարցերը
- Փորձագետին/մասնագետին առաջինը հարցաքննած կողմը

- *Քաղաքացիական և վարչական գործերի շրջանակներում*

Տեղեկատվություն գործի մասին

- Դատարանի անվանումը
- Դատավորի անուն-ազգանունը
- Գործի անվանումը/հայցապահանջը/
- Գործի համարը
- Նիստի ժամանակը
- Հայցվորը/ները/
- Հայցվորի/ների/ ներկայացուցիչը/ները/
- Հայցվորի/ների/ օրինական ներկայացուցիչը/ները/
- Պատասխանողը/ները/
- Պատասխանողի/ների/ ներկայացուցիչը/ները/
- Երրորդ անձը/ինք/

Տեղեկատվություն դատաքննության մասին

- Դատարանի անկախությունը, անաչառությունը, մրցակցության սկզբունքի պահպանումը

- Հայցվորին, պատասխանողին և դատավարության մյուս մասնակիցներին իրենց իրավունքների մասին ծանուցելը
- Հրապարակային դատավարության իրավունքի պահպանումը
- Թարգմանչի օգնության իրավունքը
- Հարցաքննելու իրավունքը
- Հավասարության իրավունքը
- Վճիռը
- Այլ հարցեր (ծավալուն նշումներ կատարել հաջորդ դատական նիստի ժամանակի և ուշադրության արժանի այլ հարցերի մասին)

Միջնորդությունները դատաքննության ընթացքում

- Միջնորդություն ներկայացնող կողմը/անուն-ազգանունը/
- Միջնորդության բովանդակությունը
- Հակառակ/հայցվոր կամ պատասխանող/ կողմի դիրքորոշումը միջնորդության վերաբերյալ
- Միջնորդության վերաբերյալ դատարանի որոշումը
- Միջնորդության վերաբերյալ դատարանի որոշման հիմքերը

Վկայի հարցաքննությունը

- Վկայի անուն-ազգանունը
- Վկայի ցուցմունքների համապատասխանությունը նախաքննության ընթացքում տված ցուցմունքներին
- Վկային առաջինը հարցաքննած կողմը
- Վկայի նկատմամբ գործադրված ազդեցությունը (օրինակ՝ հոգեբանական ճնշում)
- Դատարանի դիրքորոշումը վկայի նկատմամբ գործին մասնակցող անձի գործադրած ազդեցության վերաբերյալ
- Վկայի հարցաքննության ժամանակ այլ վկաների՝ դատական նիստերի դահլիճում գտնվելը

Փորձագետի/մասնագետի հարցաքննությունը

- Փորձագետի/մասնագետի անուն-ազգանունը
- Փորձագետի/մասնագետի մասնագիտական ոլորտը
- Փորձաքննության/մասնագիտական աջակցության տեսակը
- Փորձագետին/մասնագետին առաջադրված հարցերը
- Փորձագետին/մասնագետին առաջինը հարցաքննած կողմը

ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

- **Պրոֆեսիոնալիզմ**

Դիտորդը պարտավոր է.

– նախապես ծանոթանալ գործի վերաբերյալ առկա բոլոր տեղեկություններին՝ դիտարկվող դատական նիստի ամսաթիվ և ժամ, դատարանի նիստերի դահլիճի գտնվելու վայր, մեղադրյալների, կողմերի, նրանց ներկայացուցիչների, դատախազների ու դատավորների ինքնություն, ինչպես նաև առաջադրված մեղադրանքներ և հայցապահանջներ.

– նախապես ժամանել դատարան ժամանակին դատական նիստերի դահլիճ մտնելու համար.

– թարգմանչի հետ աշխատելու դեպքում դատական նիստերի դահլիճում ընտրել այնպիսի տեղ, որ թարգմանությունը չխանգարի դատական նիստի բնականոն ընթացքին.

– ուշադիր գրառումներ կատարել.

– խստորեն պահպանել դատարանի կանոնները.

– անձը հաստատող փաստաթուղթ ունենալ:

- **Չմիջամտելու սկզբունք**

Դիտորդը պարտավոր է.

– զերծ մնալ դատավարության վրա որևէ ազդեցություն գործելու փորձից, նույնիսկ եթե դա նպաստելու է ավելի արդար արդյունքի հասնելուն.

– երրորդ կողմերի հետ շփվելիս բացատրել դատական մշտադիտարկման նպատակը, ներառյալ չմիջամտելու սկզբունքը.

– բացատրել դիտորդի գործառույթներն ու չմիջամտելու սկզբունքը և հրաժարվել մեկնաբանություններից կամ առաջարկվող գործողություններից այն դեպքում, երբ հարցեր են առաջադրվում արդարադատության իրականացման տվյալ գործընթացի վերաբերյալ, կամ առաջարկվում է ակտիվ մասնակցել դրան:

- **Օբյեկտիվություն և անկողմնակալություն**

Դիտորդը պարտավոր է.

– մշտապես զերծ մնալ կողմերից որևէ մեկին աջակցություն հայտնելուց ինչպես դիտարկման, այնպես էլ զեկույցի պատրաստման ընթացքում.

– ձեռնպահ մնալ դատաքննության վերաբերյալ որևէ հայտարարություն անելուց ինչպես դատարանի պաշտոնատար անձանց, դատավարության կողմերի, այնպես էլ ցանկացած այլ երրորդ անձանց ներկայությամբ, ներառյալ լրատվամիջոցներով.

– հնարավորության սահմաններում դատական նիստերի դահլիճում ընտրել մի տեղ, որը հեռու է դատավարության կողմերից և մյուս մասնակիցներից, ինչպես նաև կողմերից մեկի ակնհայտ աջակիցներից և գրառումներն անել բաց ու դատավարության ընթացքին զուգահեռ.

– դատավարության մասնակից կողմերի հետ հնարավոր տարբեր հանդիպումների ընթացքում լրացուցիչ տեղեկություններ հավաքելիս փորձել կապ հաստատել վիճող կողմերի հետ և հաշվի առնել տարբեր տեսակետներ.

– խոսակցությունների ընթացքում այնպես վարվել, որ կողմերից մեկին աջակցելու տպավորություն չստեղծվի. հատկապես խուսափել կողմերի հետ երկարատև խոսակցություններից.

– զեկույցում հստակ նշել, որ տեղեկատվությունը հիմնված է լուրերի, չհաստատված հայտարարությունների վրա, արտացոլում է ինչ-որ մեկի կարծիքը և այլն:

- **Գաղտնիություն**

Դիտորդը պարտավոր է.

– ձեռնպահ մնալ դատարանի պաշտոնատար անձանց, դատավարության կողմերին կամ երրորդ անձանց, այդ թվում՝ լրատվամիջոցներին, դիտարկումների արդյունքում կամ ընթացքում հավաքած տվյալները հայտնելուց.

– ապահովել գրառումների, էլեկտրոնային տվյալների կամ մշտադիտարկման ընթացքում ձեռք բերված այլ տեղեկությունների անվտանգությունն ու չբացահայտումը, հատկապես եթե այն պարունակում է անձնական կամ գաղտնի աղբյուրներից ձեռք բերված անձնական տվյալներ:

- **Մուտք դատարան**

Եթե դիտորդին արգելվում է մտնել դատարան, կամ, օրինակ, դատական կարգադրիչները խոչընդոտում են նրա աշխատանքը, ապա դիտորդը պետք է ներկայանա և պարզաբանի դատական իշխանության ներկայացուցիչների պարտավորությունները դիտորդներին դատավարություններին մասնակցելու հնարավորություն ընձեռելու վերաբերյալ: Ոչ մի պարագայում դիտորդը չպետք է պահանջի, որ իրեն թույլ տան մտնել դատարան կամ դատական նիստերի դահլիճ կամ դատական ծառայողներին ուղղված սպառնալիք հնչեցնի. նա միշտ պետք է լինի քաղաքավարի և զուսպ: Դատարան մտնելու ցանկացած խոչընդոտի մասին դիտորդը պետք է հաղորդի իր ղեկավարին:

Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունը պետք է ունենա դիտորդների վարքագիծը կանոնակարգող նորմեր, իսկ դրանց բացակայության դեպքում խորհուրդ է տրվում առաջնորդվել միջազգային չափանիշներով:

Ստորև ներկայացվում են դիտորդների վարքագծի կանոնները՝ հիմք ընդունելով ԵԱՀԿ-ի սահմանած վարքագծի կանոնագիրքը (տե՛ս «Դատավարության մշտադիտարկում», ԵԱՀԿ, 2012թ.):

- **Անվտանգության նկատառումներ**

Դիտորդից պահանջվում է.

– ընտրել դատավարության մասնակիցների հետ հանդիպման ապահով վայր և հաղորդակցության հուսալի միջոցներ հատկապես մասնավոր աղբյուրների հետ.

– անմիջապես զեկուցել իր ղեկավարին բոլոր միջադեպերի կամ անվտանգության խնդիրների վերաբերյալ և անմիջապես դադարեցնել մշտադիտարկումը, եթե այն ինչ-ինչ պատճառներով սպառնում է իր անձնական անվտանգությանը.

– զերծ մնալ որևէ երրորդ կողմի հետ շփումից, եթե այն կարող է սպառնալ սեփական անվտանգությանը:

Ես՝ _____ -ս,ծնված /ամսաթիվ, ամիս, տարի/, անձնագրային տվյալներ՝ _____ որպես դիտորդ ընտրված (մշտադիտարկման ծրագրի անվանումը)-ում, _____ հաստատում եմ, որ ստացել եմ այս վարքագծի կանոնագրի պատճենը, հասկանում եմ դրա իմաստը, ընդունում եմ դրա բոլոր դրույթները և պարտավորվում եմ հետևել դրանց պահանջներին իմ գործառույթների իրականացման ընթացքում: Այս կանոնագրին առնչվող կասկածներ կամ հարցեր առաջանալու դեպքում դրա մասին անմիջապես կզեկուցեմ դիտորդական խմբի ղեկավարին կամ կոնտակտային անձին (կազմակերպության անվանումը):

Ես պարտավորվում եմ պահպանել սույն վարքագծի կանոնագրի դրույթները և հաստատում եմ, որ ստացել եմ կանոնագրի պատճենը:

_____ ստորագրություն

_____ ամսաթիվ, ամիս, տարի

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

- **Հանրությանը դատաքննության վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով լիարժեք տեղեկատվություն տրամադրելը**

Արդարադատության արդյունավետության վերահսկման գործընթացում մեծ է նաև զանգվածային լրատվության միջոցների դերը:

Լրագրողները պետք է գործնականում հնարավորություն ունենան ազատ և անխոչընդոտ լուսաբանելու և մեկնաբանելու արդարադատության իրականացման ամբողջ գործընթացը՝ բացառությամբ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված սահմանափակումների:

Կոնկրետ գործերով դատական վարույթի ընթացքը լուսաբանող զանգվածային լրատվության միջոցների գործունեությանն առնչվող հարաբերություններում դատարանները ղեկավարվում են դատական վարույթի հրապարակայնության սկզբունքը կարգավորող Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և դատավարական օրենսգրքերի համապատասխան նորմերով:

- **Անմեղության կանխավարկածը**

Անմեղության կանխավարկածի սկզբունքը հարգելն արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրիչ է: Զանգվածային լրատվության միջոցներով հաղորդվող յուրաքանչյուր տեղեկություն կամ կարծիք չպետք է խախտի կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի անմեղության կանխավարկածի

սկզբունքը: Վարչաիրավական և քաղաքացիաիրավական գործերով հրապարակվող տեղեկատվությունը կամ կարծիքը չպետք է խաթարի կողմերի բարեխղճության կանխավարկածը, քանի դեռ օրենքի խախտման փաստը չի հաստատվել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:

- **Լրագրողների անարգել ներկայությունը դատական նիստերին և մուտքը դատարանի դահլիճ**

Լրագրողներն առանց որևէ խտրականության և առանց նախնական հավատարմագրման կարող են անարգել ներկա գտնվել դռնբաց դատական նիստերին: Նրանք կարող են նիստերի դահլիճում մնալ այնքան ժամանակ, որքան այնտեղ են նիստին ներկա մյուս անձինք: Հնարավորության սահմաններում անհրաժեշտ է նիստերի դահլիճում ապահովել լրագրողների գործունեության համար համապատասխան պայմաններ և հատուկ այդ նպատակի համար նախատեսված տեղ (Բարձրագույն դատական խորհրդի 11.01.2019թ.-ի թիվ ԲԴԽ-2-1 որոշում):

- **Դատական նիստի ընթացքում դատարանի դահլիճից ուղիղ եթերով ձայնագրություններ և լուսատեսանկարահանումներ հեռարձակելը**

Դատարանի դահլիճից ուղիղ եթերով ձայնագրություններ և լուսատեսանկարահանումներ հեռարձակելը կարող է իրականացվել բացառապես դատարանի որոշմամբ: Դատարանը թույլտվություն կարող է տալ՝ համապատասխան լրագրողի բանավոր դիմումը քննարկելով, ընդ որում՝ պետք է համարժեքորեն հաշվի առնվի արդար դատաքննության իրավունքի լիարժեք պաշտպանության անհրաժեշտությունը: Դատարանի դահլիճից ուղիղ եթերով ձայնագրություններ և տեսանկարահանումներ կատարելու և ուղիղ եթերով հեռարձակելու վերաբերյալ թույլտվություն տալու կամ մերժելու որոշումները պետք է լինեն հիմնավորված: Ընդ որում՝ դատարանը պարտավոր է հաշվի առնել իրավունքների և ազատությունների պաշտպանության ու սահմանափակման համաչափությունը և արդարադատության շահը: Ուղիղ եթերով ձայնագրություններ և լուսատեսանկարահանումներ հեռարձակելու թույլտվության հարցը քննարկվում և լուծվում է նիստից անմիջապես առաջ՝ լրագրողի՝ նիստերի քարտուղարին ուղղված բանավոր դիմումի հիման վրա: Թույլտվությունը տրվում է տվյալ գործով դռնբաց դատական նիստերի ընթացքն ուղիղ եթերով ձայնագրությունների և լուսատեսանկարահանումների միջոցով հեռարձակելու համար և ուժը

կորցնում է միայն օրենսդրությամբ նախատեսված հիմքերով՝ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա: Այս կարգը տարածվում է նաև դատական նիստի ընթացքում լուսատեսանկարահանումներ կատարելու համար թույլտվություն ստանալու գործընթացի վրա:

- **Զանգվածային լրատվության միջոցներին պարզեցված ընթացակարգով նյութեր տրամադրելը**

Հրապարակման ենթակա տեղեկատվությունը, այդ թվում՝ հրապարակված դատական ակտերը, դատարանները զանգվածային լրատվության միջոցներին և լրագրողներին պետք է տան պարզեցված կարգով, ներառյալ դատական իշխանության պաշտոնական կայքում զետեղելու եղանակով և հնարավորինս սեղմ ժամկետում: Ավելին, լրագրողներն իրենց հասանելի դարձած փաստաթղթերը կամ դատական ակտերի պատճենները կարող են անարգել տարածել:

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Սույն ուղեցույցը հայերեն հրատարակություն է, որը պատրաստել է «Հելսինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ իրականացվող «Աջակցություն դատահիրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում: Այն նախատեսված է դատական մշտադիտարկմամբ և լուսաբանմամբ հետաքրքրված կամ դրանով զբաղվող՝ տարբեր ոլորտներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ՁԼՄ-ների ներկայացուցիչների համար: Այնուամենայնիվ, դրանից կարող է օգտվել յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է տեղեկանալ դատական մշտադիտարկման և լուսաբանման վերաբերյալ ու զբաղվել նշյալ գործունեությամբ:

Ի թիվս մի շարք հարցերի՝ ուղեցույցն անդրադառնում է նաև արդար և դռնբաց դատաքննության իրավունքի՝ որպես մարդու հիմնարար իրավունքներից մեկի իրացմանն ուղղված մեխանիզմներին՝ դատական մշտադիտարկմանն ու լուսաբանմանը բոլոր դատավարություններում (քրեական, քաղաքացիական, վարչական)՝ նպատակ ունենալով բարելավելու դիտորդների և լրագրողների հմտությունները դատավարությունների մասնագիտական մշտադիտարկման և լուսաբանման ոլորտում, ՁԼՄ-ների գործունեությունն արդար դատաքննության իրավունքի համատեքստում, դատական մշտադիտարկման սկզբունքները և մեթոդաբանությունը:

Ուղեցույցում կարելի է ծանոթանալ օգտագործվող հասկացություններին, վարքագծի կանոններին և դիտորդների համար նախատեսված օրինակելի թերթիկին:

ABSTRACT

This guide is an Armenian publication prepared by the Helsinki Association NGO as part of the project of Partnership for Justice Reform implemented together with the Eurasia Partnership Foundation and Human Rights Power NGO. It is intended for representatives of civil society organizations and the media, who are interested or engaged in trial monitoring and coverage. However, it can be used by anyone who wants to know about trial monitoring and coverage and be engaged in this activity.

Among other issues, the guide addresses the mechanisms for the realization of the right to a fair and public trial as one of the fundamental human rights, as well as to trial-monitoring and coverage in all trials (criminal, civil, administrative), aimed at improving the skills of monitors and journalists in the field of professional trial monitoring and coverage, particularly in the context of the right to a fair trial in activities of the media, and the principles and methodologies of trial-monitoring.

Finally, the publication includes the relevant concepts and rules of conduct, as well as a trial-monitoring sheet for monitors.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Դատական գործընթացների մշտադիտարկում. ուղեցույց գործող մասնագետների համար (ռուսերեն), ԵԱՀԿ, 2012.
  https://www.osce.org/ru/odihr/102519?download=true

- Դատական գործընթացների մշտադիտարկում. տեղեկատու ձեռնարկ գործող մասնագետների համար, վերանայված հրատարակություն (ռուսերեն), ԵԱՀԿ, 2012.
  https://www.osce.org/ru/odihr/102519

- Միջազգային արդար դատավարության իրավունքի իրացում (ռուսերեն), ԵԱՀԿ, 2012.
  https://www.osce.org/ru/odihr/100894

- Դատական գործընթացների մշտադիտարկում Բելառուսի Հանրապետությունում (ռուսերեն), Վարշավա, ԵԱՀԿ, 2011.
  https://www.osce.org/ru/odihr/84874?download=true